Տասներորդ հաղորդում

Դավիթը, Մեմփիբոսթեն և Աստծու բարությունը

Գրվածքների ընթերցում. Բ Թգ 9:1-13, Հռմ 2:4, Եփս 2:7, 4:32, Տտս 3:4-5, Կղս 3:12

I. Բ Թգ 9:1-13-ը գրառում է Մեմփիբոսթեի՝ Հովնաթանի որդու նկատմամբ Դավթի ցուցաբերած բարության մասին.

Ա. Դավիթը հանուն Հովնաթանի պարտավորված էր զգում բարություն ցուցաբերել Սավուղի տան մնացած յուրաքանչյուր հետնորդի հանդեպ և Սավուղի տան մի ծառայի հարցրեց. «Սավուղի տնից մնացած մարդ չկա՞, որ նրան Աստծու բարությունը ցուցաբերեմ»՝ խ. 3ա:

Բ. Ծառան Դավթին ասաց, որ դեռ կա Հովնաթանի որդի Մեմփիբոսթեն, ով ոտքերից կաղ էր՝ խ. 3բ:

Գ. Դավիթը Մեմփիբոսթեին ասաց, որ նրա հանդեպ բարություն կանի հանուն Հովնաթանի՝ նրա հոր և Մեմփիբոսթեին խոստացավ, որ նրան կվերադարձնի նրա պապի բոլոր հողերը և որ նա միշտ ուտելու է թագավորի սեղանից՝ խխ. 7, 13:

Դ. Դավիթ թագավորը պահպանեց նրա կյանքը, նրան վերադարձրեց նրա ամբողջ ժառանգությունը և նրան հրավիրեց իր հետ միևնույն սեղանի շուրջ խնջույք անելու՝ խխ. 7, 9:

Ե. Դավիթը Մեմփիբոսթեին տվեց այն ամենը, ինչ պատկանում էր Սավուղին ու նրա տանը. Մեմփիբոսթեն միշտ ուտում էր թագավորի սեղանից, և «նա երկու ոտքից էլ կաղ էր»՝ խխ. 9, 13:

II. Մեմփիբոսթեն շնորհք ստանալու հիմք չուներ, բայց այն ստացավ. նույնը ճիշտ է մեր և Աստծու առնչությամբ.

Ա. Մեմփիբոսթեն Դավթի առաջ բոլորովին դիրք չուներ՝ խխ. 1-6.

1. Նա բարության արժանացավ ոչ թե իր շնորհիվ, այլ մեկ ուրիշ անձի՝ խ. 7:
2. Սա վերաբերում է Աստծու առջև եղող մեղավորին՝ Հռմ 2:4:

Բ. «Լադաբար»-ը՝ այն վայրը, որտեղ Մեմփիբոսթեն ապրում էր, եբրայերեն բառ է, որը նշանակում է «խոտից, արոտավայրից զուրկ վայր». աշխարհն այսօր «Լադաբար» է՝ Բ Թգ 9:4.

1. Մեմփիբոսթեն, ով փախել էր Դավթից, ապրում էր խոտից զուրկ, կենսամատակարարումից զուրկ վայրում՝ խ. 4:
2. Աստծուց հեռու եղող մեղավորը նույնպես ապրում է «խոտից» զուրկ վայրում:

Գ. Մեմփիբոսթեն Դավթին չէր փնտրում, բայց Դավիթը մարդիկ ուղարկեց՝ Մեմփիբոսթեին բերելու՝ խխ. 4-5:

Դ. Երբ Դավիթն ասաց՝ Մեմփիբոսթե՛, իր սրտում կարեկցանքի զգացում կար, և նրա ձայնի մեջ հաճելի հնչերանգ կար՝ խխ. 6-7.

1. Այս խոսքերի տակ Աստծու սիրտն արտահայտող սիրտ կար՝ Ա Թգ 16:7:
2. Դավթի սիրտը լի էր բարությամբ ու կարեկցանքով՝ 20:14-15:

III. Հոգևոր տեսանկյունից՝ մենք բոլորս նման ենք Մեմփիբոսթեին՝ Սավուղ թագավորի թոռանը (Բ Թգ 4:4), ով ոտքերից կաղ էր.

Ա. Թեև Մեմփիբոսթեն հաճախ ճաշում էր թագավորի հետ, նա նախկինի պես երկու ոտքից կաղ էր մնում՝ 9:7:

Բ. Այն բանից հետո, երբ Մեմփիբոսթեն Դավթից շնորհք ընդունեց, նա նայում էր միայն Դավթի սեղանի հարստությանը. նա չէր նայում սեղանի տակ գտնվող իր կաղ ոտքերին:

Գ. Ինչպես և Մեմփիբոսթեն, մենք կարող ենք ճաշել Թագավորի սեղանի մոտ, նույնիսկ եթե նախկինի պես կաղ ենք՝ խ. 13.

1. Մեր երկու ոտքերը կաղ են, բայց դրանք *սեղանի տակ են*:
2. Մեր փրկվելուց հետո պետք է մոռանանք մեր «կաղ ոտքերի» մասին և մեր Թագավորի՝ Հիսուս Քրիստոսի սեղանի մոտ նստենք Նրան վայելելու համար՝ խ. 7, Հռմ 14:17, Նեմ 8:10.
   ա. Ամեն անգամ, երբ նայում ենք մեզ, բացահայտում ենք, որ կաղ ենք, ու վիատվում ենք՝ հմմտ Երգ 2:8–3:5:
   բ. Մենք պետք է նայենք միայն Տիրոջ սեղանի հարստությանն ու վայելենք այն՝ Եփս 3:8:
3. Այն, ինչ Աստված տարածել է մեր առջև, սքանչելի է, հարուստ և քաղցր. մենք պետք է պարզապես ուտենք դա՝ Հվի 6:50-51, 53-57, Մտթ 8:11, 22:2, Հյտ 19:9:

Դ. Մենք պետք է շրջվենք ինքնահայեցումից և մեր հայացքը շրջենք դեպի Տերը՝ Եբր 12:2, 2:9:

Ե. Եթե նայենք միայն այն հարստությանն ու շնորհքին, որոնք Աստված տարածել է մեր առջև, կխաղաղվենք, և մեր սրտերը կհագեցնան՝ Մտթ 5:6, 14:20:

IV. Դավթի բարությունը Մեմփիբոսթեի նկատմամբ խորհրդապատկերում է Աստծու բարությունը՝ Բ Թգ 9:3, Հռմ 2:4, Եփս 2:7, Տտս 3:4-5.

Ա. Բարությունը բարյացակամություն է, որը ծնվում է Աստծու ողորմածությունից ու սիրուց՝ Եփս 2:4, 7:

Բ. Մեզ մեր Փրկիչ Աստծու հենց բարությունն ու սերը փրկեցին և տարբեր դարձրեցին ուրիշներից՝ Տտս 3:4.

1. Աստծու շնորհքը փրկություն է բերում մարդուն. մենք փրկվել ենք Տիրոջ շնորհքով՝ 2:11, 3:7:
2. Տտս 3:5-ում ասվում է, որ մենք փրկվեցինք ըստ Աստծու ողորմածության.
   ա. Աստծու ողորմածությունն ավելի հեռահաս է, քան Նրա շնորհքը՝ Հռմ 9:15-16, 18, 23, Եբր 4:16:

բ. Մեր խղճալի վիճակը մեր և Աստծու շնորհքի միջև լայն անջրպետ է ստեղծել:
գ. Հենց Աստծու ողորմածությունը կամրջեց այդ անջրպետը և մեզ Նրա շնորհքի փրկությանը բերեց՝ Հռմ 2:4, 9:23:

3. Տտս 3:4 և 5-ում Պողոսը խոսում է ոչ թե շնորհքի, այլ բարության, սիրո և ողորմածության մասին.
   ա. Սերը շնորհքի աղբյուրն է. Հովհաննեսի առաջին թղթում դիպչում ենք Հայր Աստծու սիրուն՝ որպես շնորհքի աղբյուրի՝ 3:1, 4:9-10:
   բ. Հայր Աստծու սրտում սեր է. երբ այս սերն արտահայտվում է Որդու միջոցով, այն շնորհք է դառնում՝ Հվի 1:14, 16-17:
   գ. Բարությունն Աստծու վերաբերմունքն է մեր հանդեպ, երբ Նա մեզ շնորհք է տալիս՝ Եփս 2:7:
   դ. Երբ ողորմություն, սեր և բարություն ենք ստանում, ինքնաբերաբար շնորհք ենք ստանում՝ Տտս 3:4-5, 7:
   ե. Մեր Աստված և Հայրը մեր հանդեպ սեր, ողորմություն ու բարություն է ցուցաբերել. հենց սրանով է Նա մեզ փրկում՝ խխ. 4-5:

Գ. Գալիք դարաշրջաններում՝ հազարամյայի և գալիք հավիտենության դարաշրջաններում, Աստված ցուցադրելու է «Իր շնորհքի գերազանց հարստությունը Քրիստոս Հիսուսի մեջ մեր հանդեպ եղող բարությամբ»՝ Եփս 2:7.
1. Աստծու բարության մեջ է Աստծու շնորհքը տրվում մեզ՝ խ. 8:
2. Աստծու շնորհքի հարստությունը Նրա բարության մեջ անչափելի է, այն սահմաններ չունի՝ խ. 7.
   ա. Սա հենց Իր՝ Աստծու հարստությունն է մեր վայելքի համար՝ 3:8:
   բ. Աստծու շնորհքի հարստությունը բարության մեջ բացահայտորեն կցուցադրվի հավիտյան՝ 2:7:

Դ. Հոգու պտղի դրսևորումներից մեկը բարությունն է՝ Գղտ 5:22.
1. Հագած լինելով նոր մարդուն (Կղս 3:10)՝ մենք՝ որպես Աստծու ընտրյալներ՝ սուրբ ու սիրելի, պետք է հագնենք կարեկցանքի և բարության ներքին մասեր (խ. 12):
2. Պողոս առաքյալը Աստծու սպասավորն էր բարության մեջ, և նա մեզ պատվիրում էր հարատևել Աստծու բարության մեջ՝ Բ Կրթ 6:4, 6, Հռմ 11:22:
3. Սերը բարի է (Ա Կրթ 13:4), և մենք պետք է բարի լինենք միմյանց հանդեպ, գթասիրտ՝ միմյանց ներելով, ինչպես Աստված էլ Քրիստոսի մեջ մեզ ներեց (Եփս 4:32):

© 2021 Living Stream Ministry